Զարեօք պատրեալ անհնազանդ գտայ Տեառնդ օրինին,
Զգեցո ինձ, զոր կորուսի, զիմ պատմուճանն առաջին.
Անգէտ գոլով գքո գթոյդ տեղի ետու յայլ աշխարհ,
Ուր շահեցայ զսով սրտութեան՝ և սիրելեաց քոց աշխար.

Արդ սովամահ կորնչիմ Տէր, կենացդ զհաց մաղթեմ տուր,
Զի հացալից գտայց և ես իբրու զշինանցս որխտուր.
Ընկալ 'ի տուն զիս հայրենի արքայութեանդ 'ի խորան,
Ուր իմ երէց եղբայր հրեշտակք՝ կամացդ հլու կան միան.

Ամրացո, Տէր, զոտս իմ կոչկօք, իշխանութեանքն իմ Նախկին,
Զի առաթուր արկից յաւէտ զչարաթոյն թշնամին,
Որ զիս արագ խողից պաշտպան արար մեղաց և մահու,
Եւ կողոպտեալ յինէն զինչ հօրդ տանջէր զհոգիս 'ի սովու.

Սուքիասեան Արսէն Մագ. Փէնտալեանց:

Ի Վ. Ց. Ստեփաննոսի:
է վիճակէն Շամախւոյ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Արարատ ամսագրոյ երրորդ շրջանին տարեգլուխը մերձեցած լինելով, Խմբագրութիւնը կը փութայ յայտնել և միանգամայն խնդրել իւր Արգոյ բաժանորդներէն, որպէս զի օր յառաջ բարեհաճեն ամեն Հայաբնակ քաղաքներում Տպարանական Ժողովոյ կողմանէ նշանակուած Գործակալաց կանխիկ վճարել չորս ռուբլի բաժանորդագինները իւրեանց Պօչտէյ հետ 'ի միասին:

Այն ամսագրոյս սիրելի Ազգայնոց մէջ գտած համակրութիւնը և ընդունելութիւնը խրախուսած է՝ մանաւանդ պայծառացած զԽմբագրութիւն նորին՝ մի և նոյն գնով (4 ռ.) բայց փոխանակ Երեքէ՝ Չորս թերթով և երբեմն (անցեալ տարուան պէս) յաւելուածով հրատարակել Ամսագիրը:

Անշուշտ եմք, որ մեր սիրելի Ազգայինք՝ Խմբագրութեան այսպիսի տնօրէնութենէն գոհ և ուրախ զգացմանց ենթարկուելով, յառաջակայում առաւել ես համակրութեամբ և ընդունելութեամբ մեծարեն Արարատը, նա և կրկին պիտի քաջալերէ Խմբագրութիւնը հեղհեղէ ուրիշ կարևոր և օգտաւէտ փոփոխութիւնք յաւելացնելու:

Իսկ իւրաքանչիւր ամսագիրները 'ի ժամանակին՝ բաժանորդաց փութով հասուցանելոյ աղագաւ՝ Տպարանական Ժողովոյ ձեռք առած միջոցաց և կարգած Գործակալաց շնորհիւ, կը յուսամք, զի այս անգամ պատահած դժգոհութեանց այլ ևս տեղիք մնալու չէ: Գործակալաց անուանքը պէտք է շարունակ հրատարակուին Արարատոյ կողմի վերջին երեսում:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ: